



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<18>> հունվարի 18, 2012թ.

N 438

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՄԻ ՇԱՐՔ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին և 2-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետի 2012 թվականի հոկտեմբերի 11-ի N15/878 գրությունը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2008 թվականի մայիսի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների նոր կազմը հաստատելու մասին>> N118 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների կառուցվածքի <<Տ. Եսայան>> բառերը փոխարինել <<Ա. Զաքարյան>> բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2012 թվականի փետրվարի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կազմը և աշխատակարգը հաստատելու մասին>> N60 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

2) 1) որոշմամբ հաստատված հավելված N1-ի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի կազմում <<Ա. Աղաբաբյան>> բառերը փոխարինել <<Մ. Քարտաշյան>> բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Մ Ա Ր Ձ Պ Ե Տ



Ա. ՂԱՐԱՄԱՆՅԱՆ